
 facebook.com/peacedialogue

 twitter.com/peacedialogue

Խ ա ղ ա ղ ու թ յ ա ն
Երկխոսություն 

Տարեկան հաշվետվություն | 2015 - 2016

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔ ՀԿ ՆԱԽԱԳԱՀ Է. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՑ	3
«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ	5
• «ԽԵ» գործունեությունը 2015-2016 թթ. ընթացքում	6
• «Արենա. համայնքային թատրոն և հանրային արվեստ»	7
• «Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին»	9
• ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության վերաբերյալ իրազեկության բարձրացման ծրագիր	11
• «Քաղաքացիական վերահսկողությունը, որպես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիք»	13
• «Խաղաղասեր կանանց գործակալություն»	14
• Peace Counts դասընթացներ	15
• EPNK-3	16
2015 – 2016 ՖԻՍԿԱԼ ՏԱՐԻՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	17



ԽՈՍՔ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Էդգար Խաչատրյանից



«Մեր կազմակերպությունը շարունակում է աջակցել քաղաքացիական հասարակության դերակատարների մասնակցությանը ժողովրդավարացման և հակամարտությունների կարգավորման գործընթացներին ինչպես մեր, այնպես էլ՝ հարևան երկրներում»:

Հարգելի շահառուներ, դոնորներ, աջակիցներ և կազմակերպության գործունեությանը հետևողներ, սիրով ներկայացնում ենք «Խաղաղության երկխոսություն» հկ-ի երկամյա հաշվետվությունը՝ 2015-2016թվականների համար:

Վերջին երկու տարիների ընթացքում մեր կազմակերպությունը շարունակել է աջակցել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ակտիվ մասնակցությանը ժողովրդավարության և հակամարտությունների կարգավորման գործում ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ հարևան երկրներում և շրջաններում: Հայրտությամբ արձանագրում ենք, որ նշված ժամանակահատվածում մեր գործողությունների աշխարհագրությունն ընդլայնվել և ընդգրկում է Արևելյան գործընկերության տարածաշրջանի և Ռուսաստանի Դաշնության՝ հակամարտություններից տուժած տարբեր համայնքներ:

Չնայած տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների լարված ընթացքին՝ «Խաղաղության երկխոսության» թիմը շարունակել է իր գործունեությունն՝ ուղղված քաղաքացիական հասարակության դերակատարների խաղաղասիրական նախաձեռնությունների էֆֆեկտիվության բարձրացմանը, այն նախաձեռնությունների և ծրագրերի, որոնք ուղղված են մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանությանը:

Վերջին երկու տարիների ընթացքում իրականացրել ենք տարբեր ծրագրեր և նախաձեռնություններ՝ ուղղված Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի,

Ուկրաինայի և Ռուսաստանի (Չեչնյա, Դոնի Ռոստով և Սանկտ Պետերբուրգ) քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարողությունների զարգացմանը: Իրականացրել ենք կարողությունների զարգացման 7 տարածաշրջանային դասընթաց՝ նշված երկրները ներկայացնող ավելի քան 170 ակտիվիստի համար, ինչպես նաև աջակցել մեր ծրագրերի մասնակիցների 15 տեղական ու տարածաշրջանային նախաձեռնության:

2015 և 2016 թվականներին ԽԵ-ն իրականացրել է նաև մի շարք ծրագրեր և իրազեկության բարձրացման արշավներ, որոնք նպատակ ունեին նվազեցնել ՀՀ զինված ուժերում իրավախախտումների թիվը: Ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունների նպատակներն են՝

- ՀՀ զինված ուժերում խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների ընտանիքների շահերի պաշտպանություն
- Հանրային իրազեկում զինված ուժերում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ,
- Մարդու իրավունքների խախտման դեպքերի, իրավախախտումների և հարաբերականորեն խաղաղ պայմաններում մահացությունների փաստագրում և վերլուծություն, առաջարկությունների փաթեթի պատրաստում՝ ուղղված ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների խախտման դեպքերի կանխարգելմանը,
- Չորակոչիկների շրջանում զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացում:

Ավելին, նշված ժամանակահատվածում կազմակերպության մի շարք նախաձեռնություններ ուղղված էին այն խնդիրների լուծմանը, որոնք հանրային մտահոգության առարկա են Վանաձոր քաղաքի համար, որտեղ ԽԵ գրասենյակն է: Կազմակերպության թիմն ընդգրկված էր նախաձեռնությունների մեջ, որոնք ուղղված էին Վանաձորում համայնքային տրանսպորտի գործունեության բարելավմանը, նպատակ ունեին ուսումնասիրել տրանսպորտի ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերն ու առաջարկությունների փաթեթ պատրաստել բարեփոխումների համար:

Հարկ է նշել, որ ԽԵ գործունեության արդյունավետության բարձրացման համար մենք նաև իրականացրել ենք մի շարք կառուցվածքային բարեփոխումներ կազմակերպության ներսում և մեր տեղական ու միջազգային գործընկերների աջակցությամբ կշարունակենք ջանքերն՝ ուղղված «Խաղաղության երկխոսության» ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը, որպեսզի արդյունավետ կերպով հասնենք մեր ռազմավարական նպատակներին:

Որպես ամփոփում՝ ցանկանում ենք երախտիքի խոսք ուղղել մեր բոլոր գործընկերներին, աջակիցներին ու դոնորներին իրենց կարևորագույն՝ մտավոր, քաղաքական և ֆինանսական աջակցության համար, ինչի շնորհիվ կազմակերպությունը կարողանում է արդյունավետ աշխատել, ձգտել ցանկալի փոփոխությունների մեր քաղաքում, երկրում ու տարածաշրջանում:



«ԽԵ»-ն գործունեություն է իրականացնում 3 թեմատիկ ուղղություններով

	Ժողովրդավարական ինստիտուտների զարգացում ու հզորացում		Մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի ձևավորում	
Իսաղաղասիրական շարժման ու խաղաղության մշակույթի ձևավորում				

2015-2016 թթ.-ին «ԽԵ»-ն իրականացրել է թվով 7 տեղական, ազգային եւ միջազգային նախաձեռնություն

Քաղաքացիական վերահսկողությունը՝ որպես կոռուպցիոն ոիսկերի նվազեցման գործիք	Իսաղաղասեր կանանց գործակալություն	Արենա. համայնքային թատրոն և հանրային արվեստ	Peace Counts դասընթացներ	EPNK - 3	Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին	«Հ զինված ուժերում մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության վերաբերյալ իրազեկության բարձրացման ծրագիր

Արդյունքներ

Տպագրվել է 10 հոդված	Անց է կացվել 1 հեռուստա- հաղորդում	Հարավային Կովկասում, Ռուսաստա- նում եւ Ուկրա- ինայում գտնվող 10 քաղաքներ մասնակցել են «ԽԵ» ծրագրերում	370 մարդ մասնակցել է միջոցա- ռումներին	Անց է կացվել 7 կարողու- թյունների զարգաց- ման դասընթաց	Ծրագրերի մասնակից- ները կազմակեր- պել են 15 նախաձեռ- նություն	Կազմա- կերպվել է 15 ազգային միջոցա- ռում	21 մարդ ստացել է իրավական աջակցություն	700 մարդ մասնակցել է միջո- ցառումներին	Նախաձեռ- նվել է 5 դատական արոցես

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ

«Խաղաղության երկխոսությունը» ոչ կրոնական, ոչ քաղաքական կամ հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2009 թվականին Հայաստանում:

Տեսլական. կազմակերպությունը միավորում է Արևելյան գործընկերության երկներում, Ռուսաստանում և Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող փորձառու իրավապաշտպանների և խաղաղության կառուցման ուղղությամբ ակտիվ գործունեություն ծավալող ակտիվիստների՝ ժողովրդավարացման և հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացներում քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը խթանելու նպատակով:

Առաքելություն. ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում բազմաշերտ երկխոսության ձևավորման միջոցով կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային հասարակություններում կազմակերպությունը ձգտում է՝

- խաղաղասիրական շարժման ու խաղաղության մշակույթի ձևավորման,
- մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի ձևավորման,
- ժողովրդավարական ինստիտուտների զարգացման ու հզորացման:

Ռազմավարական նպատակներ. «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության միջոցառումներն ու ծրագրերը հիմնականում ուղղված են՝

- քաղաքացիական խաղաղասիրական ներուժի զարգացմանը,
- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը,
- պետական մարմինների կողմից հանրային նշանակություն ունեցող որոշումների կայացման գործընթացներում քաղաքացիական վերահսկողության սահմանմանը,
- քաղաքական և քաղաքացիական գործընթացներում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության հնարավորությունների ապահովմանը,
- քաղաքացիական խաղաղասիրական նախաձեռնությունների աջակցությանը,
- հակամարտությունների արդյունքում տուժածների շահերի պաշտպանությանը:

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
« ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ »
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 2015-2016 ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Խաղաղության երկխոսություն» իր ռազմավարական պլանով նախատեսված երեք թեմատիկ ուղղություններով իրականացրել է հետևյալ նախագծերը.



Արենա. համայնքային թատրոն և հանրային արվեստ



Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին



ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության վերաբերյալ իրազեկության բարձրացման ծրագիր



Քաղաքացիական վերահսկողությունը՝ որպես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիք



Խաղաղասեր կանանց գործակալություն



“PEACE COUNTS” դասընթացների ծրագիր



EPNK – 3

© 2016, «Խաղաղության երկխոսություն», «ԱՐԵՆԱ. Խաղաղության և արվեստի ամառային դպրոց»:

Նկարի հեղինակ՝ Արմինե Զաքարյան



Արենա. համայնքային թատրոն և հանրային արվեստ

Ծրագրի տևողություն՝ 3 տարի

Բյուջե 2015 եւ 2016՝ 218,588 եվրո

Դռնոր՝ «ԱՐԵՆԱ. համայնքային թատրոն եւ հանրային արվեստ» ծրագիրն իրականացվում է Գերմանիայի դաշնության արտաքին մշակութային կապերի ինստիտուտի (ifa) “zivik” ծրագրի աջակցությամբ՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով:

Ծրագրի գերմանացի գործընկեր՝ OWEN Mobile Akademie für Geschlechterdemokratie und Friedensförderung e.V.

Նախապատմություն

Ընթացքի մեջ գտնվող, եռամյա «ԱՐԵՆԱ. համայնքային թատրոն եւ հանրային արվեստ» ծրագիրը նպատակ ունի բարելավել խաղաղասիրության ազդեցությունը համայնքային և տարածաշրջանային մակարդակում՝ համայնքային մակարդակով իրականացվող խաղաղասիրության համար մշակելով համապատասխան արդյունավետ ռազմավարություններ, ինչպես նաև ստեղծելով ապահով, արդյունավետ հարթակ և ցանց Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի ու Ռուսաստանի Դաշնության (Չեչնիա, Ռոստով և Սանկտ Պետերբուրգ) քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար:

Ընդհանուր նպատակներ՝

- Ստեղծել հարթակ, որը փոխադարձ

աջակցության արժեքավոր հնարավորություններ է տալիս եւ օգնում քաղաքացիական հասարակության դերակատարներին՝ դիմակայել իրենց սեփական հասարակություններից մեկուսացմանը: Մասնակիցներին միմյանցից սովորելու, տեսական ու գործնական հմտություններ, գիտելիքներ եւ տեխնիկական գործիքներ ձեռք բերելու հնարավորություն տալ (այդ թվում՝ թատերական եւ հասարակական արվեստի տեխնիկաներ)՝ տեղերում առավել արդյունավետ աշխատելու, մասնակիցների հզորացման, տարբեր գործընթացների համակարգման և ուսուցման համար: Բացի այդ, նտադրություն կա հարթակը նախագծում ներգրավված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար

երկխոսության եւ խնդիրներին անդրադառնալու ռեսուրս դարձնելու, որի արդյունքում կարելի կլինի մշակել նոր համատեղ ռազմավարություններ՝ համայնքներում հետագա խաղաղասիրական աշխատանքի համար, բարձրացնել նրանց դերը՝ որպես տեղական ոչ հիերարխիկ, խաղաղասեր ակտիվիստների խմբեր ձևավորելու գործում առաջնորդների:

- Հաստատել քաղաքացիական հասարակության եւ հետաքրքրված (շահագրգիռ) միջազգային դերակատարների ցանց՝ Կովկասում, Ռուսաստանում եւ Ուկրաինայում խաղաղասեր ակտիվիստների կայուն համագործակցության եւ աջակցության մեխանիզմների ստեղծման նպատակով:



© 2016, «Խաղաղության երկխոսություն», «ԱՐԵՆԱ. Խաղաղության և արվեստի ամառային դպրոց»:

Սկարի հեղինակ՝ Արմինե Զաքարյան

Կարող են արդյոք գեղարվեստական միջոցներն օգտագործվել մարդու իրավունքների պաշտպանության մեջ:

Բորժումիում այս տարվա հուլիսի 7-16-ը կայացած «Ամառային դպրոց՝ հանուն խաղաղության և արվեստի» ծրագրի մասնակիցներն այս հարցին միանշանակ պատասխանեցին՝ այո: Ամառային դպրոցի ավարտին Վրաստանից, Հայաստանից, Ադրբեջանից, Ուկրաինայից, Ռուսաստանից և Լիբանանից ժամանած մասնակիցները ներկայացրեցին թատրոնի, կոմիքսի և տեսանկարահանման դասընթացներում ձեռք բերած արդյունքները: Հանդիսատեսն, այդ թվում՝ Թբիլիսիում Գերմանիայի փոխդեսպան Մոնիկա Լենհարդը, տպավորված էր աշխատանքների արտահայտչականությամբ և հասարակական կարևորությամբ:

Վրաստանում Գերմանիայի դեսպանատուն

- Աջակցել Արևելյան գործընկերության երկրներում և Ռուսաստանի Դաշնությունում գործող քաղաքացիության ներկայացուցիչներին, որպեսզի նրանք ձգտեն ուժեղացնել խաղաղասիրության ազդեցությունը թե՛ տարածաշրջանային, թե՛ տեղական մակարդակներում՝ ստեղծագործական մոտեցումների, նոր մեթոդների ու գործողությունների միջոցով:

Արդյունքներ, մեր մեկնաբանությունները

«Խաղաղության երկխոսությունը» կազմակերպել է Արենայի հարթակի անդամների ներգրավմամբ չորս տարածաշրջանային նախաձեռնություններ.

- երկու դասընթաց՝ փորձի սիստեմատիզացիայի վերաբերյալ,
- մեկ դասընթաց՝ համայնքային առաջնորդության վերաբերյալ,
- խաղաղության և արվեստի ամառային դպրոց:

Բացի այդ, «Արենայի» շրջանակներում «Խաղաղության երկխոսությունն» աջակցում է մասնակիցների տեղական նախաձեռնություններին, որոնք նպատակ ունեն նրանց համայնքների բնակիչներին ակտիվացնելու և խաղաղասիրության շուրջը

համախմբելու:

Հետագա գործողություններ

Քննարկվել և նախապատրաստվել է «Արենայի» երրորդ տարվա գործողությունների հայտը: Ծրագրի վերջին երկու տարիների 37 մասնակից այս փուլում եւս ներգրավված կլինի:

Այն բաղկացած է երեք հիմնական բաղադրիչներից՝

- Կարողությունների զարգացում և փոխադարձ ուսուցանում,
- ցանցի, դրանում ներգրավված մասնակիցների միջև աշխատանքային հարաբերությունների կառուցում,
- վերլուծական աշխատանք և համատեղ ռազմավարության մշակում:

Երրորդ փուլի ընթացքում «Խաղաղության երկխոսությունն» ու իր գերմանական գործընկեր ՕՎԵՆ-ը կիրականացնեն հետևյալ գործողությունները.

- քաղաքացիական հասարակության՝ ծրագրում ընգրկված դերակատարներին երկխոսության, համատեղ ուսուցման և փորձի փոխանակման համար ապահով և անվտանգ տարածքի տրամադրում,

- մասնակցային երկխոսությանը, վերլուծությանը, ռազմավարական զարգացմանն ու արդյունավետ պլանավորմանն ուղղված գործողություններ, ուսուցողական գործընթացի և համայնքային թատրոնի ու արվեստի շուրջ կարծիքների փոխանակման խթանում,

- ստեղծագործական տարրեր պարունակող մեթոդաբանության մշակում վերլուծության և նախաձեռնողական ռազմավարության համար՝ հիմնվելով տարածաշրջանում ներկայիս քաղաքական զարգացումների, մասնակիցների ռեսուրսների, հետաքրքրությունների և ներուժի վրա,

- խրախուսել և աջակցել մասնակիցների՝ իրենց իսկ համայնքներում իրականացվելիք այն նախաձեռնություններին, որոնք ուղղված են բռնության մշակույթի հաղթահարմանն ու քննադատական մտքի զարգացմանը,

- մասնակիցների ջանքերն առավել կայուն եւ արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ լրացուցիչ օժանդակող ռեսուրսների բացահայտում և ներգրավում:



© 2015, «Խաղաղության երկխոսություն», «Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին», Վանաձորի դպրոցներից մեկում ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ դասընթաց՝ զորակոչային տարիքի երիտասարդների համար:

Նկարի հեղինակ՝ Արմինե Զաքարյան

«Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին»

Ծրագրի տևողություն՝ 3 տարի

Ընդհանուր բյուջե (2015թ.)՝ 5,300 եվրո

Դոնոր՝ PAX (Նիդեռլանդներ)

Շահառուներ՝ պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինվորներ եւ նրանց հարազատներ, մահացած զինծառայողների հարազատներ:

Նախապատմություն

2013 թվականից սկսած՝ «Խաղաղության երկխոսություն» իրականացնում է «Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին» անունը կրող, նիդերլանդական PAX կազմակերպության կողմից ֆինանսավորվող երկարաժամկետ ծրագիրը: Նպատակը հայկական զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի բարելավումն է՝ այդպիսով բարձրացնելու համար զինվորների անվտանգությունը: Հայկական զինված ուժերում ամենօրյա երեսույթ հանդիսացող իրավախախտումները հաճախ ավարտվում են մահվան դեպքերով: Դրանց պատճառները, մասնավորապես, նաեւ լայն հասարակության կողմից անհրաժեշտ ուշադրության եւ դրանց վերացնելու համար անհրաժեշտ հասարակական պահանջի բացակայության պայմաններում արհամարիված են մնում, ինչն իր հերթին հանգեցնում է

խախտումների և իրավախախտումների շարունակականության: Իրավիճակի հիմնական պատճառներից մեկն էլ բանակի փակ կառույց լինելն է: Մյուս պատճառը՝ «հաղթանակած» բանակի, հաղթական սպաների վերաբերյալ ընդունված ընկալումն է, որն ստիպում է մարդկանց անվերապահորեն հավատալ և վստահել բանակին՝ միաժամանակ թերահավատությամբ մոտենալով հանցագործությունների և խախտումների դեպքերին, դրանցում ղեկավար, սպայական կազմի ունեցած բացասական դերին, նման դեպքերի կանխարգելման գործում նրանց թերացումներին:

Թիրախ խմբեր

Տեղական և միջազգային դերակատարներ (Track-I և Track-II), ովքեր կարող են դրական ազդեցություն ունենալ իրավիճակի վրա: Զոհված զինծառայողների ընտանիքների անդամները, ովքեր օգնում են

տեղեկություններ հավաքագրել ոչ մարտական իրավիճակներում մահվան ելքով միջադեպերի վերաբերյալ ծրագրի շրջանակներում ստեղծված տվյալների բազայի համար:

Զինծառայողներ, ովքեր ժամկետային զինծառայություն են անցնում և տվյալների բազայում տեղեկություններ են մուտքագրում զորամասերում տեղի ունեցող իրավախախտումների վերաբերյալ:

Ընդհանուր նպատակներ

- Ընտանիքներին իրենց զավակների մահվան վերաբերյալ ճշմարիտ տեղեկատվության տրամադրում
- ՀՀ զինված ուժերում զինվորների անվտանգության և նրանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ հնարավորինս մեծ տեղեկատվություն պարունակող հանրային ռեսուրսի զարգացում եւ



© 2015, «Խաղաղության երկխոսություն», «Ապահով գինվորներ» անվտանգ Հայաստանին»:

Նկարի հեղինակ՝ Ադաուր Մանուկյան

պահպանում

- Բանակում մահացությունների հետ կապված ճշգրիտ տեղեկատվության հանրային մատչելիության իրավունքի դատական կարգով պաշտպանություն, ինչի արդյունքում կբարձրանա նաև ռազմական և դատական համակարգերում պրոֆեսիոնալիզմն ու թափանցիկությունը
- Ծրագիրը նպատակ ունի նաև սեփական օրինակով ցուցադրել, որ Հայաստանում կարելի է ցանկալի փոփոխությունների հասնել թե՛ վարչական, թե՛ դատական գործընթացներում՝ դատարան դիմելու և հանրային ճնշման միջոցով:

Արդյունքներ և մեկնաբանություններ

Ավելի քան 450 երիտասարդ մասնակցել է «Խաղաղության երկխոսության» կազմակերպած տարբեր միջոցառումներին, որոնք նպատակ ունեն բարձրացնել զորակոչային տարիքի երիտասարդների իրազակվածությունը գինվորական ծառայության ընթացքում իրենց ունեցած իրավունքների վերաբերյալ:

Շուրջ 170 մարդ մասնակցել է «Արդարադատարանին» կոնֆլիկտի մոդելավորման 6 խաղ-քննարկումներին:

Ծրագրի ընթացքում «Խաղաղության երկխոսությունն» անվճար իրավաբանական աջակցություն է ցուցաբերել 21 մարդու:

ԽԵ-ն ստեղծել է և այժմ կարգավորում է 1994թ.-ից մինչ օրս (Ադրբեջանի

հետ կնքված գինադադարից հետո) համեմատաբար խաղաղ պայմաններում ՀՀ զինված ուժերում գրանցված մահվան ելքով դեպքեր եւ իրավախախտումներ ներառող տվյալների բազա պարունակող safe-soldiers.am կայքէջը: Այն ներառում է նաև զինած ուժերին վերաբերող իրավական ակտեր ու միջազգային պայմանագրեր, ինչպես նաև տեղական և միջազգային կազմակերպությունների հաշվետվություններ, հրապարակումներ, փորձագիտական վերլուծություններ, կոնտակտային տվյալներ: Կայքի այցելուները կարող են ծանոթանալ մահվան դեպքերի վիճակագրության, դրանց պաշտոնական և ոչ պաշտոնական պատճառների հիման վրա կազմված ինտերակտիվ դիագրամների և քարտեզների հետ:

2015 թվականին «Խաղաղության երկխոսությունը» հայց է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության դեմ՝ 1994-2014 թթ. զինծառայողների մահվան հանգեցրած դեպքերի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու պահանջով: «Ապահով գինվորներ» անվտանգ Հայաստանին» ծրագրի շրջանակներում PAX-ը ֆինանսական աջակցություն է տրամադրել դատարանում ներկայանալու նպատակով:

Ներկայում, անցնելով ՀՀ բոլոր դատական ատյաններով, կազմակերպությունը հայց է նախապատրաստում Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու համար: «Խաղաղության երկխոսության» աշխատակազմը հանդգնած է, որ տեղեկատվություն տրամադրելը շարունակաբար մերժող ՊՆ-ն իր այս քայլով եւս մեկ անգամ ապացուցում է, որ նպատակ չունի կանխարգելել հետագա հնարավոր կամայականությունները,

նաև՝ կասկածի տակ է առնում Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքով նախատեսված անձանց կամ որոշակի խմբի իրավունքները (մանրամասն՝ safesoldiers.am կայքում):

Սակայն, ծրագրի կարևորագույն արդյունքներից մեկը զոհված զինծառայողների ընտանիքի անդամների վերաբերմունքի փոփոխությունն է: Ծրագրում ընդգրկված ընտանիքների ներգրավվածությունն ու դերը մահվան գործերով իրականացվող հետաքննություններում դարձել է ավելի նշանակալի, քանի որ կազմակերպության աջակցությամբ ավելի մեծ հնարավորություն ունեն առավել հետևողական լինելու դատարանում իրենց իրավունքները պաշտպանելու և հանրային հարթակներում խնդիրները բարձրաձայնելու հարցերում:

Ծրագրի շրջանակներում 9 զոհված զինծառայողների ծնողներ մասնակցեցին հարցազրույցներից բաղկացած տեսաքարոզարշավին, որը կոչվում էր «Մենք իրավունք ունենք իմանալ ճշմարտությունը»: Նման գաղափար ծագեց, երբ «Ապահով գինվորներ» անվտանգ Հայաստանին» ծրագրի իրականացման ընթացքում, կայքում մահվան ելքով միջադեպերը փաստագրելիս, ծրագրի անձնակազմը հայտնաբերեց, որ շատ ընտանիքներ չեն հավատում իրենց հարազատի մահվան վերաբերյալ հայտնված «պաշտոնական» վարկածներին, մանավանդ, եթե մահվան պատճառն ամենահաճախը կրկնվող «դժբախտ պատահարը» կամ «ինքնասպանությունն» է:

Ծրագրի ավարտին <http://safesoldiers.am/en/> կայքը տեղեկատվություն է տրամադրել 721 մահվան ելքով միջադեպերի վերաբերյալ:

Ծրագրի մեկ այլ կարևոր բաղադրիչներից է զորակոչիկների՝ մինչ բանակ զորակոչվելը սեփական իրավունքների պաշտպանության և խթանման մեխանիզմների վերաբերյալ իրազեկության բարձրացումը:

Ծրագրի իրականացման ընթացքում «Խաղաղության երկխոսության» աշխատակազմը տարատեսակ կարևորագույն խնդիրների մասին է բարձրաձայնել, որոնք ներկայացվել են ոչ միայն կազմակերպության կայքերում, այլ նաև տեղական, ազգային և միջազգային տարբեր լրատվամիջոցների միջոցով:



© 2015, «Իսաղաղության երկխոսություն», կլոր սեղան-քննարկում ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ, Վանաձոր:

Նկարի հեղինակ՝ Արթուր Մանուկյան

ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության վերաբերյալ իրազեկության բարձրացման ծրագիր

Ծրագրի տևողություն՝ 1 տարի (2015-2016)

Մեկ տարվա ընդհանուր բյուջե՝ 24 736.08 ԱՄՆ դոլար

Դոնոր՝ ԱՄՆ դեսպանության Ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների ծրագիր

Շահառուներ՝ Պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինվորներ եւ նրանց հարազատներ, մահացած զինծառայողների հարազատներ:

Նախապատմություն

Ծրագիրը, որն «Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին» ծրագրի տրամաբանական շարունակությունն է, մեկնարկել է 2015 թվականին: Ուղղված է բանակում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ իրազեկության բարձրացմանը տեղական եւ միջազգային մակարդակներում, նպատակ ունի նաեւ համախմբել ջանքերն այդ իրավունքները հարգելու, թափանցիկության եւ հաշվետվողականության վերաբերյալ հասարակական պահանջարկ ձեւավորելու համար:

Թիրախ խմբեր

(1) Հայաստանի 5 մարզերում (Լոռի, Տավուշ, Վայոց Ձոր, Արարատ, Սյունիք) գործող տեղական հեռուստաընկերությունների

լսարանները եւ քաղհասարակության ներկայացուցիչներ;

(2) ՀՀ պաշտպանական կառույցների պաշտոնյաներ;

(3) համացանցի 18-40 տարեկան օգտատերեր, ովքեր ներգրավված են ակտիվիզմի տարբեր տեսակներում, սակայն երբեմն չեն աշխատել բանակի հետ կապված որոշակի խնդիրների շուրջ;

(4) մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող եւ Հայաստանում դիվանագիտական առաքելություն իրականացնող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ;

(5) ՀՀ զինված ուժերի խնդիրներով զբաղվող տեղական, միջազգային փորձագետներ:

Ընդհանուր նպատակներ

- ՀՀ կառավարության եւ պաշտպանական կառույցների պաշտոնյաների իրազեկվածության բարձրացում ՀՀ զինված ուժերում գրանցվող մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ,
- ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների նկատմամբ հասարակական անտարբերության դեմ պայքար թե՛ միջազգային, թե՛ տեղական (Լոռի, Տավուշ, Վայոց Ձոր, Արարատ, Սյունիք) մակարդակներում,
- քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, տեղական եւ միջազգային փորձագետների, անկախ հետազոտողների ներգրավում խնդիրը



© 2015, «Խաղաղության երկխոսություն», կլոր սեղան-քննարկում ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ, Վանաձոր:

Նկարի հեղինակ՝ Արթուր Մանուկյան

բազմակողմանի ուսումնասիրելու և նոր, այլընտրանքային մոդելներ (որոնք լավագույնս կհամապատասխանեն հայկական համատեքստին) նախագծելու գործում:

Արդյունքներ և մեկնաբանություններ

Ծրագրի շրջանակներում հինգ կլոր-սեղան քննարկումներ են կազմակերպվել Լոռու, Սյունիքի, Արարատի, Տավուշի եւ Վայոց Ձորի մարզերում՝ նպատակ ունենալով բարձրացնել պաշտոնյաների և հասարակության իրազեկվածությունը բանակում մարդու իրավունքների խնդիրների շուրջ: Ավելի քան 85 մարդ է մասնակցել դրանց: Նշված մարզերում մարզպետարանների, զինկոմիսարիատների, դատախազության և ռազմական ոստիկանության աշխատակիցներ մասնակցեցին միջոցառումներին, ներկայացրեցին խնդիր շուրջ իրենց տեսակետներն ու մտահոգությունները: Թեմայի շուրջ բաց քննարկումները նաեւ հնարավորություն են բազմաթիվ ընտանիքների համար՝ իրենց պատմությունները պատմելու:

«Խաղաղության երկխոսության» փորձագետ-քրեագետը կազմակերպության աշխատակցի հետ միասին մասնակցել է Հարություն Համբարյանի, Մանուչար Մանուչարյանի և Գևորգ Բախատրյանի մահվան

գործերով դատական նիստերին: .

Ծրագիրն ավելի հանրայնացվելուց հետո այլ ընտանիքներ ևս կապվել են ծրագրի աշխատակազմի հետ և աջակցություն խնդրել: Հարկ եղած դեպքերում «Խաղաղության երկխոսությունը» տրամադրել է նաեւ այն ռազմական կամ կառավարական կազմակերպությունների համապատասխան կոնտակտային տվյալները, որոնք իրավասու են պատասխանել այս ընտանիքներին հուզող հարցերին:

Կազմակերպության է դիմել երկու զորակոչիկ, ովքեր զորակոչվելու ծանուցագիր էին ստացել, թեեւ պետք է զինվորական ծառայությունից ազատված լինեին լուրջ առողջական խնդիրների պատճառով: Նաեւ կազմակերպության խորհրդատվության շնորհիվ վիճակը պարզաբանվեց:

Տարբեր տեղական և միջազգային լրատվամիջոցներ և վերլուծական կենտրոններ օգտագործում են հայկական բանակում խաղաղ պայմաններում գրանցված մահվան ելքով միջադեպերի վերաբերյալ տվյալներն ու հաշվետվությունները: Վերջիններս տեղադրվում են www.safesoldiers.am կայքում՝ եռամսյակը մեկ անգամ: Ծրագրի արդյունքում լրացվել է կայքի տվյալների բազան, որն այժմ 938 մահվան դեպք է ներառում:

Այս շատ կարևոր ծրագրի վերաբերյալ

տեղեկատվություն տարածելու համար «Խաղաղության երկխոսություն» օգտվեց նաեւ տեղական և միջազգային փորձագետների, խաղաղասերների և ակտիվիստների մեծ ցանցի օգնությունից:

Առաջարկությունների փաթեթ է ուղարկվել ՀՀ ՊՆ, այդ թվում՝ առաջարկելով մարդու իրավունքների դասընթացներ ներառել ռազմական ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերի մեջ՝ բարելավելու համար մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ այդ հաստատությունների անձնակազմների գիտելիքները: Պատասխան նամակով հայտնվեց, որ որոշ առաջարկներ կընդգրկվեն ՊՆ կողմից իրականացվելիք, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության դրույթներից բխող գործողությունների՝ 2017-2019թթ. ծրագրի նախագծի մշակման մեջ:

Բացի վերը նշվածից, «Խաղաղության երկխոսությունը» պատրաստվում է իրականացնել մի նոր նախաձեռնություն եւս: Նպատակը՝ խթանել քաղհասարակության ակտիվ մասնակցությունը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանը՝ կայուն մեխանիզմների ներդրմամբ, որոնք ՊՆ-ի գործունեության նկատմամբ հասարակական ավելի մեծ վերահսկողություն կապահովեն:



«Քաղաքացիական վերահսկողությունը՝ որպես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիք»

Ծրագրի տևողություն՝ 6 ամիս

Ընդհանուր բյուջեն՝ 919, 800 ԴՐԱՄ

Դոնոր՝ Ծրագիրն իրականացվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության ծրագրի փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Համաֆինանսավորվել է Եվրոպական միության և ԵԱՀԿ երեսնյան գրասենյակի կողմից:

Նախապատմություն

Ծրագիրը մեկնարկել է 2015 թվականի մայիսին և ավարտվել նույն թվականի օգոստոսի 15-ին: Վանաձորցիների համար ավելի ու ավելի մտահոգիչ են դառնում հանրային տրանսպորտի հետ կապված, տարեցտարի ավելի մտահոգիչ դարձող խնդիրները: Երթուղայինները գտնվում են սանիտարահիգիենիկ վատ վիճակում, վարորդները ծխում են վարելու ընթացքում, ղեկին նստում՝ անգամ ալկոհոլի ազդեցության տակ: Տրանսպորտային միջոցների աշխատանքը հաճախ չի համընկնում ժամանակացույցի հետ, որը ծառայություն մատուցող ընկերությունները նշում են իրենց հայտերում, ելնելով որոնցից՝ հենց այդ ընկերություններն են ընտրվել այս հանրային ծառայությունը մատուցելու

համար:

Թիրախ խումբ

Վանաձորցիներ:

Ընդհանուր նպատակներ

Բացահայտել Վանաձոր քաղաքում տրանսպորտի ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերն ու ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկների փաթեթ մշակել:

Արդյունքներ և/կամ մեկնաբանություններ

Ծրագիրը բաղակացած էր մի քանի փուլից.

- «Խաղաղության երկխոսությունը»

պաշտոնական հարցումներ է ուղարկել Վանաձորի քաղաքապետարան, որպեսզի վերլուծվեն տրանսպորտի ոլորտը համակարգող կառույցների միջև ձեռք բերված պայմանավորվածությունները, անհրաժեշտության դեպքում վերանայվեն դրանց միջև համագործակցության մեխանիզմները, կապերն ու պարտավորությունները:

- ուսումնասիրվել է տրանսպորտային համակարգի ամենաթույլ կողմերն ու մշակվել առաջարկությունների փաթեթ, որն ուղարկվել է բոլոր համապատասխան կառույցներին (կապի և տրանսպորտի նախարարություն, քաղաքապետարանի առևտրի և սպասարկման, տրանսպորտը համակարգող, Լոռու մարզպետարանի տրանսպորտի և ճանապարհաշինության բաժիններ):
- կազմակերպել է հարցումներ բնակիչների և համապատասխան տեղական պաշտոնյաների շրջանում՝ հասկանալու համար այն խնդիրները, որոնք նրանք տեսնում են տրանսպորտի բնագավառում: Հարցումների հիման վրա մշակված նյութերն ու հողվածները հրապարակվել են «Խաղաղության երկխոսության» կայքում և «Ասպարեզ» օրաթերթում:
- «Խաղաղության երկխոսությունը» թեմայի շուրջ կազմակերպել է հեռուստաբանավեճ, որին մասնակցել են «Խաղաղության երկխոսություն» հկ-ի նախագահը, Լոռու մարզպետարանի տրանսպորտի և ճանապարհաշինության եւ Վանաձորի քաղաքապետարանի առևտրի և սպասարկման, տրանսպորտը համակարգող բաժինների ղեկավարները:
- Առաջարկությունների փաթեթի վերջնական տարբերակը մշակվել է ուղարկվել է համապատասխան մարմիններին: «Խաղաղության երկխոսություն» հկ-ի ներկայացրած առաջարկությունների հիման վրա Վանաձորի քաղաքապետարանը Վանաձորում երթուղիները սպասարկող ընկերությունների հետ կազմել է նոր պայմանագրեր:



© 2015, «Խաղաղության երկխոսություն»
«Խաղաղասեր կանանց գործակալություն»
Դասընթաց Երևանում:
Լուսանկարը՝ Արմինե Ջաքարյանի:

Ընդհանուր նպատակներ

Ծրագրում մեծ ուշադրություն է հատկացվում այն բանին, որպեսզի տվյալ խնդիրների ուղղությամբ հենց մասնակից կանայք աշխատեն հասարակության հետ: Դա, սակայն, կազմակերպիչների կողմից ընկալվում է ոչ որպես վերջնական արդյունք, այլ որոշակի քայլ տարածաշրջանում խաղաղասիրական գործընթացներում հույսով, որ նման կերպ կարելի է ծրագրի շարունակությունն առավել ընդլայնել հետագայում: Ծրագրի տրամաբանությունը հիմնված է նաև համատեղ աշխատանքի մեթոդների յուրահատուկ համադրության վրա, ուղղված է նորարարական երկխոսության գործընթացի ստեղծմանը՝ հիմնված «Խաղաղության երկխոսության» մեկուսացված խմբերի համար ներառական գործընթացների զարգացման փորձի վրա:

տեղական և միջազգային Track-1 դերակատարներին՝ տարածաշրջանում բնակվող կին-դերակատարների հետ ոչ ֆորմալ երկխոսություն ծավալելու համար: Տեղեկացնել նրանց մի խումբ կանանց կողմից տեղական (և ոչ միայն) մակարդակում ձեռնարկված նախաձեռնությունների վերաբերյալ:

Արդյունքներ և/կամ մեկնաբանություններ

2015 թվականին, «Խաղաղության երկխոսություն» իր ֆիննական CMI և գերմանական OWEN գործընկերների հետ միասին հնգօրյա դասընթաց կազմակերպեց ինքնակենսագրական հիշողությունների և «բանավոր պատմության» թեմաների շուրջ: Մասնակից 25 կանայք ներկայացնում էին Հայաստանում, Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում կանանց հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններ: Ավելի քան 200 մարդ է ներգրավվել «Խաղաղասեր կանանց գործակալություն» ծրագրի մասնակիցների տեղական նախաձեռնություններում:

2015 թվականի հուլիսին Թբիլիսում կայացած տարածաշրջանային համատեղ դասընթացի ընթացքում Հայաստանից, Ադրբեջանից և Լեռնային Ղարաբաղից ժամանած մասնակիցներն ստացան հուշարձանների և պատմությունների հետ աշխատանքի հմտություններ: Հետագայում, մասնակիցների կողմից կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ տեղերում, որոնցում նրանք օգտագործեցին դասընթացի մեթոդաբանությունն ու դրա ընթացքում ստացած գիտելիքները:

Գնահատելով եւ վերլուծելով ծրագրի շրջանակներում տեղերում իրականացված աշխատանքները՝ կարելի է եզրակացնել, որ հուշարձանների փոխանցած հաղորդագրությունները, անձնական պատմությունների փոխանցումն ու վերարտադրումը կարող են շատ տարբեր լինել կախված քաղաքական եւ սոցիալական համատեքստերից: «Խաղաղության երկխոսությունը» մտադիր է հետագայում էլ շարունակել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունից տուժած համայնքներում բնակվող կանանց ակտիվացնելու եւ նրանց խաղաղասիրական գործընթացներում ներգրավելու իր ջանքերը:

Խաղաղասեր կանանց գործակալություն

Ծրագրի սկզբնական 2 տարի

Ընդհանուր բյուջե 2015՝ 9,278.70 եվրո

Դոնոր՝ Crisis Management Initiative (CMI), Ֆինլանդիա

Նախապատմություն

2014 թվականի երկրորդ կեսին «Խաղաղության երկխոսություն» իր գործընկերոջ՝ ֆիննական «Ճգնաժամերի կառավարման նախաձեռնություն» (CMI – CRISIS MANAGEMENT INITIATIVE) կազմակերպության աջակցությամբ, նախաձեռնեց «Օգնե՛ք երիտասարդ կանանց խաղաղություն կառուցել Կովկասում» ծրագիրը: Սրանով մեկնարկեցին համատեղ ուժերով կազմակերպվող «Խաղաղասեր կանանց գործակալություն» ծրագրի մշակման և նախապատրաստական աշխատանքները: Ծրագրի նպատակն է ակտիվացնել և խաղաղասիրական ու քաղաքացիական գործընթացների մեջ ներգրավել տարածաշրջանում բնակվող կանանց՝ կազմակերպելով համակարգված բազմաշերտ երկխոսությունների գործընթաց:

Թիրախ խմբեր

Կանայք, ովքեր հաճախ դուրս են մնում քաղաքացիական հասարակությունից և համայնքային մակարդակում իրականացվող գործընթացներից:

- Կարևոր է ընդլայնել, հզորացնել և բարելավել տարածաշրջանում գործող կին դերակատարների աշխատանքի արդյունավետությունը, որպեսզի նրանք դառնան փոփոխությունների ակտիվ դերակատարներ (դրական փոփոխություններին ամեն կերպ ընդդիմանալու փոխարեն) եւ համապատասխան ազդեցություն ունենան իրենց համայնքների վրա:
- Ընդլայնել և ակտիվացնել կանանց մասնակցության արդյունավետությունն ու նրանց ձայնը լսելի դարձնել խաղաղասիրական գործընթացներում՝ առաջարկությունների հավաքագրման պարբերական և արդյունավետ մեխանիզմ մշակելով:
- Քննադատական մոտեցումներ ձեռավորել պատմության նկատմամբ եւ ամրացնել պատկերացումներն այն մասին, որ միեւնույն պատմական իրադարձության մասին տարբեր ընկալումներ կարող են լինել: Տեսանելի դարձնել, թե այդ տարատեսակ մեկնաբանություններն ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ հակամարտության կամ դրա կարգավորման, նաեւ՝ տարածաշրջանում ընթացող խաղաղասիրական գործընթացների վրա:
- Տարածք տրամադրել



© 2015, «Խաղաղության երկխոսություն», Peace Counts դասընթացներ Վանաձորում:

Լուսանկարի հեղինակ՝ Արմինե Զաքարյան

Peace Counts դասընթացներ

Ծրագրի տևողություն՝ 3 ամիս

Ընդհանուր բյուջե՝ 2015թ.՝ 1,600 եվրո

Դոնոր՝ Բերգհոֆի հիմնադրամ (Գերմանիա)

Նախապատմություն

Ծրագիրն իրականացվում է մոլորակի տարբեր աշխարհամասերում, հակամարտության մեջ ներգրավված տարածաշրջաններում եւ երկրներում: Նպատակ ունի ներկայացնել աշխարհի տարբեր անկյուններում իրականացված, խաղաղությանն ուղղված զանազան հաջողված նախաձեռնություններ՝ քաջալերելու համար մարդկանց իրենց իսկ համայնքներում նմանատիպ գործողություններ նախաձեռնել:

Մեթոդաբանության առանձնահատկությունն այն է, որ դասընթացների անցկացման ժամանակ առանձնահատուկ շեշտադրում է արվում այլոց հաջողված փորձից, մասնավորապես՝ կենսագրություններից սովորելու վրա:

Վիզուալ բազմաթիվ տարրերն օգտագործվում են որպես մասնակիցների քննադատական

ներգրավվածությունն ապահովելու միջոց՝ հատկապես հակամարտության, բռնության և խաղաղության թեմաների շուրջ քննարկում ծավալելու նպատակով:

Գերմանական Բերգհոֆի հիմնադրամի «Peace Counts» մեթոդաբանության կիրառմամբ «Խաղաղության երկխոսություն» հկ-ի ներկայացուցիչներ Աննա Զաքարյանը և Արտաշես Սերգոյանը, համագործակցելով իրենց վրացի և արբխազ գործընկերների հետ, դասընթացների շարք անցկացրեցին Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Թիրախ խմբեր

Զինված ուժերում զոհված զինծառայողների մայրեր, երիտասարդներ, ովքեր հետաքրքրված են խաղաղասիրությամբ:

Արդյունքներ և/կամ մեկնաբանություններ

Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում նմանատիպ հանդիպումներ են կազմակերպվել Շուշիում, Ստեփանակերտում, Երևանում, Վանաձորում, Ալավերդիում և Բերդավանում: Մեկ այլ հանդիպում նախատեսված է նոյեմբերին՝ Գյումրիում:

Դասընթացների ընթացքում ապագա դասընթացավարները՝ կրթության ոլորտում, հասարակական կամ լրագրողական կազմակերպություններում ներգրավված անհատներ, գիտելիքներ եւ կարողություններ ձեռք բերեցին իրենց հետագա աշխատանքի համար: Մասնակիցները ծանոթացան խաղաղասիրական կրթության տարբեր մեթոդների հետ, որոնք հետագայում կարող են օգտագործել իրենց համայնքներում, ամենօրյա աշխատանքում:

Աղբյուրը՝ www.cmi.fi



EPNK-3

Ծրագրի տևողություն՝ 1 տարի

Ընդհանուր բյուջե՝ 2016թ.՝ 6000 ԵԱՐՈ

Դոնոր՝ Ճգնաժամերի կառավարման նախաձեռնություն (CMI), Ֆինլանդիա

2010 թ.-ից, «Ճգնաժամերի կառավարման նախաձեռնությունն» աշխատում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ներգրավված հասարակությունները ներկայացնող հիմնական դերակատարների հետ՝ նպատակ ունենալով բարձրացնել այս խմբերի միջև վստահության մակարդակը:

Նախապատմություն

EPNK-3-ի նպատակն է վիճարկել Լեռնային Ղարաբաղի հակամարտության հաղթահարման փակուղի մտած գործընթացը՝ հայացք ուղղելով երիտասարդ սերնդին, ովքեր մեծացել են մեկուսացման մեջ և ներկայացնում են այն խումբը, որն ամենաշատն է տուժել հակամարտությունից:

Թիրախ խմբեր

Հասարակական կազմակերպություններ, լրատվամիջոցներ և ներկայացուցչական մարմիններ:

Ընդհանուր նպատակներ

- Կապեր ստեղծել ընթացող ռազմական գործողություններից տուժած և մեկուսացած, կամ պաշտոնական բանակցություններում առաջընթացի բացակայությունից տուժած անհատների և խմբերի միջև:
- Երիտասարդ մասնակիցներին աջակցել ձեռք մեկնել իրենց հասարակություններում մարգինալացված խմբերին (կանայք, երիտասարդներ, ներքին տեղահանվածներ (IDP) և փախստականներ):

- Աջակցել երիտասարդ մասնագետներին՝ վստահության ամրապնդմանն ուղղված նախաձեռնություններ իրականացնել իրենց համայնքներում:
- Հաղորդակցվելու կապուղիներ տրամադրել երիտասարդ մասնագետների և տեղական ու միջազգային դերակատարների միջև, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան տեղեկանալու տեղական նախաձեռնությունների հետ:


Արդյունքներ և/կամ մեկնաբանություններ

Երիտասարդ մասնագետների կողմից իրականացված նախաձեռնությունները բազմազան էին՝ անիմացիոն, փաստագրական ֆիլմեր, դասընթացներ, հետազոտություններ և վերլուծություններ: Այս նախաձեռնությունները միտված էին դեպի խաղաղասիրական գործընթացներում ավելի լայն շրջանակների ներգրավմանը, նաև՝ երկարատև հակամարտություններին վերաբերող նոր միտումների ու մոտեցումների տարածմանը:

«ԽԵ» Ֆինանսական վիճակը 2015 թ.-ի կտրվածքով

N	Եկամուտներ եւ փաստացի ծախսեր 2015թ. (եվրո)	Ընդհանուր եկամուտներ	Փաստացի ծախսեր	Ընդհանուր բալանս
1	Հոնորարներ և աշխատավարձեր*	46,468.11	41,979.02	4,489.10
2	Դասընթացների կազմակերպման ծախսեր	23,385.79	22,989.09	396.7
3	Դասընթացների իրականացման վայրի վարձակալություն	22,721.17	19,615.47	3,105.71
4	Տրանսպորտային/ճամփորդական ծախսեր	11,701.41	13,089.74	-1,388.32
5	Մնունդ	1,544.87	1,316.21	228.66
6	Տպագրական ծախսեր, գրավոր և բանավոր թարգմանություններ	8,780.96	8,798.06	-17.1
7	Գնահատում	3,474.00	3,409.19	64.81
8	Այլ ծախսեր	5,294.27	5,198.64	95.63
9	Ադմինիստրատիվ ծախսեր	3,329.12	3,418.61	-89.5
10	Սարքավորումներ	300	318.84	-18.84
11	Ուսումնասիրություններ, հետազոտություններ	5,856.62	4,284.18	1,572.44
12	Փորձագետներ, խորհրդատուներ	11,693.55	7,519.72	4,173.83
	Ընդհանուր՝	144,549.88	131,936.76	12,613.12


«ԽԵ» Ֆինանսական ծախսերը 2015 թ.-ի կտրվածքով




«ԽԵ» Ֆինանսական վիճակը 2016 թ.-ի կտրվածքով

N	Եկամուտներ եւ փաստացի ծախսեր 2016թ. (եվրո)	Ընդհանուր եկամուտներ	Փաստացի ծախսեր	Ընդհանուր բալանս
1	Հոնորարներ և աշխատավարձեր*	35,956.63	35,856.72	99.91
2	Դասընթացների կազմակերպման ծախսեր	22,094.82	22,094.82	0
3	Դասընթացների իրականացման վայրի վարձակալություն	43,651.28	43,601.65	49.63
4	Տրանսպորտային/ճամփորդական ծախսեր	18,529.86	17,969.19	560.66
5	Սնունդ	894.05	1,054.06	-160.01
6	Տպագրական ծախսեր, գրավոր և բանավոր թարգմանություններ	8,710.57	8,692.19	18.38
7	Գնահատում	3,402.00	3,402.00	0
8	Այլ ծախսեր	5,904.69	5,723.44	181.25
9	Ադմինիստրատիվ ծախսեր	3,001.68	2,847.84	153.84
10	Սարքավորումներ	2,198.00	0	2,198.00
11	Ուսումնասիրություններ, հետազոտություններ	0	0	0
12	Փորձագետներ, խորհրդատուներ	4,173.83	4,316.30	-142.47
	Ընդհանուր՝	148,517.40	145,558.20	2,959.20

«ԽԵ» Ֆինանսական ծախսերը 2016 թ.-ի կտրվածքով



2015-16թթ. ֆինանսական ծախսերի համեմատություն



* «Հոնորարներ և աշխատավարձեր» բյուջետային տողը ներառում է նաև ծրագրերի միջազգային աշխատակազմի և արտասահմանից հրավիրված դասընթացավարներին վճարումները:

Անձնակազմ

Վահագն Անտոնյան
Անի Դերձյան
Էդգար Խաչատրյան
Արտաշես Սերգոյան
Արմինե Զաքարյան
Մարատ Գևորգյան

Խմբագրական թիմ


Օլեգ Եգորով Ռակովսկի
Արմինե Զաքարյան
Արտաշես Սերգոյան
Էդգար Խաչատրյան
Վահագն Անտոնյան
Անի Դերձյան

Խորհրդի անդամներ

Էդգար Խաչատրյան՝
նախագահ
Սերգեյ Դիգոնե
Համլետ Ազարյան
Դանա Զիրոուշ
Օթար Կարալաշվիլի

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002,
ք. Վանաձոր;
Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ;
Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am
URL: <http://www.peacedialogue.am>;
<http://www.safesoldiers.am>

Շատերն են օգնել մեզ անհատական
ծրագրերում: Այժմ էլ շարունակում են
շրջափելի դեր ունենալ այն ամենում, ինչն
օգնում է «Խաղաղության երկխոսությանը»
դառնալ այն, ինչ իրենից ներկայացնում է
այսօր: Այս անհատներից ոմանք աշխատել
են պայմանագրային հիմունքներով,
շատերն էլ՝ նվիրված կամավորներ են:



Խ ա ղ ա ղ ու թ յ ա ն
Երկխոսություն



© 2016, «Խաղաղության երկխոսություն»
Վանաձոր, Հայաստան
Կազմի վրայի լուսանկարներ՝
Արմինե Զաքարյան,
Մարատ Գեորգյան